

Ռումանիացիք՝ ի բնէ հանգուրժողք, այս մասին
 ոչ Հայերը⁵³ եւ ոչ Մոլտաւիա բնակող ուրիշ
 ազգերը կը նեղէին, ինչպէս յայտնի է Գէորգ
 Փոն Ռայնէրստորֆի գրութիւններէն, որ Ֆեր-
 տինանտ թագաւորին դեսպանն էր Մոլտաւիոյ
 Ռարէշ իշխանին (1527—1538, եւ 1541
 —1546) քով: Ղասն զի կը գրէ անիկայ.
 «Մոլտաւիոյ մէջ Մոլտաւիոյ իշխանին իբրեւ
 հպատակ կ'ապրին ի միասին այլեւայլ ցեղով եւ
 կրօնիւ ազգեր, ինչպէս՝ Ռութէն, Լեհ, Սերպիա-
 ցի, Հայ, Պուլկար եւ Թաթար, կան նաեւ շատ
 Սաքսոնիացիներ ի Թրանսիլվանիոյ. ... Ինչ-
 որքէր սոլորո-նի-ններ եւ վարդապետ-նի-ններ
 ունին, սակայն իրարու հետ վնն կ'ու-նի⁵⁴:»

Նոյն կերպով կը ստորագրէ իշխան Գե-
 մետրիոս Քանդէմիր Ռումանացւոց հանգուրժողու-
 թիւնն առ Հայս ի կրօնականս, վասն զի կ'ըսէ.
 «Հայոց եկեղեցիքն որթողոքս եկեղեցիներէն ոչ
 փոքր եւ ոչ նուազագոյն զարդարեալ են, եւ ա-
 զատութիւն ունին իրենց կրօնին մէջ⁵⁵:»

Մոլտաւիոյ, ինչպէս նաեւ Պուքովինայի
 Հայերն ժամանակաւ այնպէս հարստացան, որ
 Սուլթանին Սգանա՝ Սուլթանայի Պուրկկասսէ փողոցի
 վրայ ունեցած տներնին մեռնելու ատեն Մոլտո-
 վիցա վանքին նուիրեցին: Այս նուէրն հաստա-
 աեց Պետրոս Ահարոն Գ Մոլտաւիոյ իշխանն յա-
 մին 1448⁵⁶, իւր երկրորդ իշխանութեան ժա-
 մանակ (1448—1449), զոր եւ կրկնեց յետոյ
 յամին 1451 Յնր. 10 Պոկտան Բ իշխանն